# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » հուլիսի 2023 **թվականի** N 1736-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 117/9 ՀԱՍՑԵԻ 19.13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 117/7 հասցեի հիմքը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12012021-08-0032 վկայական):

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 117/9 հասցեի 19.13 (տասնինն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30062023-08-0026 վկայական):

Քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 117/7 հասցեի հիմքին կից Երևանյան խճուղի N 117/9 հասցեի 19.13 (տասնինն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48[1]-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 03-ին N 13860 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանին աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 117/9 հասցեի 19.13 (տասնինն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 34434 (երեսունչորս հազար չորս հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
   1) Պարտավորեցնել քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանին.
   2) Աստիճաններ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
   3) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել

նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:

4) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

3. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գուրգեն Ստեփանի Պավլեյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«__11__» __հուլիսի__ 2023 **թվականի** N __1435__-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԻՆԵ ԶԱՐԻՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նարինե Զարինյանի (ՀՎՀՀ՝ 57422527, գրանցման ամսաթիվ՝ 14.03.2022 թ.) 2023 թվականի հունիսի 28-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունիսի 28-ին 13532-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նարինե Զարինյանին Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոց 25 հասցեում իրականացնել ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նարինե Զարինյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.07.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«__11__» __հուլիսի__ 2023 **թվականի** N_1734_-Ա

### «ՍԱՀԱՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՂԱՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Սահարա» ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Սահակյանի (ՀՎՀՀ՝ 05535387, գրանցման ամսաթիվը՝ 07.08.2008 թ.) 2023 թվականի հուլիսի 4-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 4-ին 13984-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Սահարա» ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Սահակյանին Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի հարևանությամբ իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սահարա» ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիսի 2023 **թվականի** N 1733-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 2 ՇԵՆՔ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանի (ՀՎՀՀ՝ 57217502, գրանցման ամսաթիվ՝ 25.09.1998 թ.) 2023 թվականի հուլիսի 3-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 4-ին 13999-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոց 2 շենք 1/1 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2023 **թվականի** N 1732-Ա

**«ՍԱՀԱՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՂԱՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Սահարա» ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Սահակյանի (ՀՎՀՀ՝ 05535387, գրանցման ամսաթիվը՝ 07.08.2008 թ.) 2023 թվականի հուլիսի 4-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 4-ին 13985-2023 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել «Սահարա» ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Սահակյանին Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի հարևանությամբ իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սահարա» ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիսի 2023 **թվականի** N 1731-Ա

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ի 2023 թվականի հունիսի 28-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 04-ին 13983 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ.**

1. Թույլատրել <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 6/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հուլիսի 01- ից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.07.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիսի 2023 թվականի N 1730 Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԽՈՐԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 24 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Խորեն Ղուկասյանի 2023 թվականի հուլիսի 04-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 04-ին 13978 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Խորեն Ղուկասյանին Գյումրի քաղաքի Սպանդարյան 24 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 1.2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հուլիսի 10- ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Խորեն Ղուկասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2023 թվականի N 1729-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 2 ՇԵՆՔ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանի (ՀՎՀՀ՝ 57217502, գրանցման ամսաթիվ՝ 25.09.1998 թ.) 2023 թվականի հուլիսի 3-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 4-ին 14000-2023 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոց 2 շենք 1/1 հասցեում իրականացնել ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հակոբ Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.07.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հուլիսի 2023 **թվականի** N 1728-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՄՎԵԼ ՄՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սամվել Մրյանի (ՀՎՀՀ՝ 57430463, գրանցման ամսաթիվ՝ 05.06.2023 թ.) 2023 թվականի հուլիսի 4-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հուլիսի 4-ին 13980-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սամվել Մրյանին Գյումրի քաղաքի Աբովյան 2 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սամվել Մրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.07.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«11» հուլիսի 2023 թվականի N 1727-Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 2011-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ստեղծվելիք մրցութային հանձնաժողովներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմից հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու մասին>> N 2011-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 3-րդ կետում <<Առուշանյան Դավիթ>> բառերը փոխարինել <<Մկրտչյան Վահագն>> բառերով.

2) 10-րդ կետում <<պետի ժամանակավոր պաշտոնակատար>> բառերը փոխարինել <<պետ>> բառով.

3) 11-րդ կետում <<:>> կետադրական նշանը փոխարինել <<,>> կետադրական նշանով.

4) լրացնել նոր 12-րդ կետ.

<< 12. Մկրտչյան Մենուա – աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ – գլխավոր ֆինանսիստ:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Մկրտչյանին, Շողիկ Ալեքսանյանին և Մենուա Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.07.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2023

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2023 թվականի
հուլիսի 11-ի N 1727-Լ որոշման
<<Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2022 թվականի
սեպտեմբերի 20 -ի N 2011 -Լ որոշման>>

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԵԼԻՔ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

1. Սամսոնյան Վարդգես – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավար,
2. Պապիկյան Արթուր – համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
3. Մկրտչյան Վահագն – համայնքի ղեկավարի տեղակալ,
4. Սուլթանյան Հայկ – համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական,
5. Ջիլավյան Լենա – համայնքի ղեկավարի խորհրդական (այսուհետ՝ խորհրդական),
6. Մարգարյան Ալբերտ - խորհրդական,
7. Անդրիասյան Ռոբերտ - խորհրդական,
8. Բադալյան Կարեն - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քարտուղար,
9. Թովմասյան Լիլիթ - աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ,
10. Ալեքսանյան Շողիկ – աշխատակազմի կրթության բաժնի պետ,
11. Ղազարյան Միխակ – աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ,
12. Մկրտչյան Մենուա- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2023 **թվականի** N 1726-Ա

## <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-ԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի հունիսի 10-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունիսի 21-ին 12802 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրել (տեղաբաշխել) ավտոբուսային կանգառներին պաստառներ ընդհանուր 267 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հունիսի 10- ից մինչև 2023 թվականի հուլիսի 10-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.07.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

Ղեկավարի 2023 թ. [illegible]

N 1726-Ն որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍՊԸ-Ի ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

| Հ/Հ | Կանգառ/Հասցե | Քանակ | (քառ. մ) |
|---|---|---|---|
| 1 | Անկախության փողոց | 2 | 24 |
| 2 | Հաղթանակի պողոտա | 2 | 28 |
| 3 | Բագրատունյաց հր. Վիրոյի կողմ | 2 | 14 |
| 4 | Տերյան փողոց (Տիգրան Մեծ ռեստորանին հարակից) | 1 | 7 |
| 5 | Տերյան փողոց (Ձիթողցոնց տուն-թանգարանին հարակից) | 1 | 9 |
| 6 | Տերյան փողոց (Ձիթողցոնց տուն-թանգարանին հարակից) | 1 | 7 |
| 7 | Սուսայելյան փողոց (Պեգաս և Կառոնա սուպերմարկետների դիմաց) | 1 | 14 |
| 8 | Սուսայելյան փողոց (Կառոնա սուպերմարկետների դիմաց) | 1 | 7 |
| 9 | Վազգեն Սարգսյան (19 դպրոցի դիմաց) | 1 | 9 |
| | Վազգեն Սարգսյան (ՀՊՏՀ ԳՄ-ի դիմաց) | 1 | 14 |
| | Վազգեն Սարգսյան (ՀՊՏՀ ԳՄ-ի դիմացի մայթ) | 1 | 9 |
| | Երկաթգծի կայարանի դիմաց (Թուրվանդ և Բասեն սուպերմարկետի դիմաց) | 1 | 9 |
| 10 | Երկաթգծի կայարանի դիմաց | 1 | 9 |
| 11 | Տիգրան Մեծ (Բասեն սուպերմարկետի դիմացի մայթ) | 1 | 9 |
| 12 | Շիրակացի փողոց | 2 | 18 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 19 | 187 |

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | | |
|---|---|---|---|
| 1 | Սայաթ- Նովա փողոց | 20 | 80 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 20 | 80 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<_10_>>_հուլիսի_ 2023 թվականի N 1725-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱԼԱՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԻԿՏՈՐՅԱ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի 2023 թվականի հուլիսի 7-ի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Մանկապատանեկան արվեստի պալատ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վիկտորյա Ռուբենի Մատինյանին գործուղել քաղաք Երևան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն արտադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների դասավանդման շաբաթական ծանրաբեռնվածության հարցերը հստակեցնելու հետ կապված քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման ժամկետը 1 ( մեկ ) օր՝ 2023 թվականի հուլիսի 12-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիկտորյա Ռուբենի Մատինյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<10>> հուլիսի 2023 թվականի N 1729-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՅԱՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի 2023 թվականի հուլիսի 7-ի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Համլետի Ղուկասյանին գործուղել քաղաք Երևան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ արտադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների դասավանդման շարաթական ծանրաբեռնվածության հարցերը հստակեցնելու հետ կապված քննարկմանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ժամկետը 1 ( մեկ ) օր՝ 2023 թվականի հուլիսի 12-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Համլետի Ղուկասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2023 թվականի N 1723-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՆՈՒՅՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲՐԱՀԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Աբրահամի Աբրահամյանին՝ 2023 թվականի հուլիսի 11-ից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Աբրահամի Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.07.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2023 թվականի N1722Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍԵՐԳԵՅ ԼԵՎՈՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Սերգեյ Լևոնի Մուրադյանին ազատել նույն բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումից՝ 2023 թվականի հուլիսի 11-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերգեյ Լևոնի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2023 **թվականի** N 1721-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05 -Ի N 1394-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք № 16/1 հասցեի 31.5 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 1394-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/06/2023 թվականի N Կ-20062023-08-0129 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք № 16/1 հասցեի 31.5 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 1394-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախաբանում, որոշման 1-ին կետում «համատեղ » բառը փոխարինել «բաժնային» բառով :

10.07.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2023 **թվականի** N 1720-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ N 33/28 ՀԱՍՑԵԻ 73.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոցի N 33/28 հասցեի 73.68 (յոթանասուներեք ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոցի N 33/28 հասցեի 73.68 (յոթանասուներեք ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 3-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» նոյեմբերի 2023 **թվականի** N 1719-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 2460-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գարեգին Նժդեհի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 19.51 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 21.28 քառակուսի մետր արտաքին (18.28 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 2460-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գարեգին Նժդեհի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 19.51 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 21.28 քառակուսի մետր արտաքին (18.28 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 2460-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝
   1) նախաբանում «կետի» բառից հետո լրացնել «և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված չլինելու փաստը հավաստող տեղեկանքը՝ N 20238TEWAK» թիվը և բառերը,
   2) որոշումը լրացնել նոր 5-րդ կետով.
   «5. Հողամասի 1.77 (մեկ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը թողնել որպես ընդհանուր բաժնային սեփականություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 14/3 հասցեի բնակելի տան հողամասի հետ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2023 թվականի N 1718-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 336-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոցի N 122 հասցեի բնակելի տան հողամասին կից 143.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 78.31 քառակուսի մետր արտաքին 63.57 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ (մառան) շինությունններն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 336-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոցի N 122 հասցեի բնակելի տան հողամասին կից 143.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 78.31 քառակուսի մետր արտաքին 63.57 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ (մառան) շինությունններն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 336-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
    1) Վերնագրում և նախաբանում և որոշման 1-ին կետում «143.4 (մեկ հարյուր քառասուներեք ամբողջ չորս տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «141.8 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ ութ տասնորդական)» թվով և բառերով,
    2) Վերնագրում և նախաբանում և որոշման 1-ին կետում «78.31 (յոթանասունութ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «76.66 (յոթանասունվեց ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական)» թվով և բառերով,
    3) Վերնագրում և նախաբանում և որոշման 1-ին կետում «63.57 (վաթսուներեք ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «63.45 (վաթսուներեք ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական)» թվով և բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**